ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2020թ. № 73

ՍԻՄՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՇԻՐՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիմոն Հովհաննեսի Շիրոյանի դիմումը՝ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 2020 թվականի փետրվարի 21-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն Սպիտակ համայնքի բնակիչ Սիմոն Հովհաննեսի Շիրոյանի կողմից Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0054-0010 և 06-006-0054-0013 կադաստրային ծածկագրերով հողամասերից հատված ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին, որը դրսևորվել է հողամասերում պարիսպ կառուցելով:

Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 21-ի թիվ 67 որոշմամբ նշանակվել է վարչական իրավախախտման գործի քննության օր, որի մասին Սիմոն Հովհաննեսի Շիրոյանը պատշաճ կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարչական իրավախախտման գործի քննությանը:

Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի փետրվարի 21-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, «Տեխպրոյեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի փետրվարի 1-ի եզրակացությամբ, 2020 թվականի հունվարի 23-ի անշարժ գույքի չափագրման հաշվետվությամբ, Սիմոն Հովհաննեսի Շիրոյանի դիմումով հիմնավորվեց, որ Սպիտակ համայնքի բնակիչ Սիմոն Հովհաննեսի Շիրոյանը ինքնակամ զավթել է Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0054-0010 և 06-006-0054-0013 կադաստրային ծածկագրերով հողամասերից ընդհանուր 0,10951 հեկտար մակերեսով հատված և չի վերացրել դրա հետևանքները, որը դրսևորվել է հողմասերում պարիսպ կառուցելով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին:

3. Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2020թ. № 74

ՊԱՆՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑ ՊԱՐՍՊԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ, 4-րդ մասի 1-ին պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով, նույն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով, 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող Պանրագործների թաղամասում գտնվող 06-006-0054-0010 և 06-006-0054-0013 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 0,10951 հեկտար ընդհանուր մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասի վրա 2007 թվականին կառուցված 23,05 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՉՅԱՆ

ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի սեփականության հանդիսացող Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող 06-006-0054-0010 և 06-006-0054-0013 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 0,10951 հեկտար մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և դրա վրա գտնվող ինքնակամ կառուցված 23,05 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական՝ համաձայն հատակագծի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Պանրագործների թաղամաս, թիվ 244» հասցեն:

4.Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

5. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին (ծնված 24.05.1955թ.) օրինականացված կառույցը և դրա պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.փետրվարի 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2020թ. № 75

ՀԱՄԼԵՏ ՌԱՖԻԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 2020 թվականի փետրվարի 24-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Համլետ Ռաֆիկի Շահբազյանի կողմից Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասից հատված ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Համլետ Ռաֆիկի Շահբազյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2020 թվականի փետրվարի 27-ին, ժամը 10:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Համլետ Ռաֆիկի Շահբազյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.փետրվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2020թ. № 76

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 79-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմեն Հակոբյանի 2020 թվականի փետրվարի 17-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Արմեն Հակոբյանին (ՀՎՀՀ 66001377) տալ «ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 5/13» հասցեում գտնվող ավտոպահեստամասերի խանութում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի համար:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2020թ. № 77

ՎԱՐՈՒԺԱՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ԵՎ ԲԱՎԱԿԱՆ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13022020-06-0006 վկայականը և Վարուժան Հովհաննեսի Հովակիմյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վարուժան Հովհաննեսի Հովակիմյանին և Բավական Ռուշանի Ռուշանյանին ընդհանոր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասում գտնվող 06-006-0485-0035 կադաստրային ծածկագրով 0,08 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան թաղամաս, թիվ 280» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2020թ. № 78

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀՐԱՆՈՒՇ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հրանուշ Դանիելյանի 2020 թվականի փետրվարի 24-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Հրանուշ Դանիելյանի (ՀՎՀՀ 66891961) տալ «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 100 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2020թ. № 79

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Երևանյան խճուղու վրա գտնվող 06-006-0184-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,30825 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Երևանյան խճուղի, թիվ 94» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2020թ. № 80

ՍԱՄՎԵԼ ԱՂՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1068298 վկայականը և Սամվել Վանիկի Աղումյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սամվել Վանիկի Աղումյանին սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Մուրացան փողոցի վրա գտնվող 06006 465-2 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին, դրա վրա գտնվող 06006 465-2-1 կադաստրային ծածկագրով 125,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 06006 465-2-2 կադաստրային ծածկագրով 30,2 քառակուսի մետր մակերեսով մառանին տրամադրել «քաղաք Սպիտակ, Մուրացան փողոց, թիվ 27» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2020թ. № 81

ՆԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 6-ի թիվ 303-Ն որոշման, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 73-Ա որոշումը և Նարինե Ալբերտի Ավագյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «քաղաք Սպիտակ, Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փողոց, 5-րդ անցում թիվ 6/1» հասցեի 54 քառակուսի մետր մակերեսով 2 սենյականոց բնակելի տունը և այդ բնակելի տան հետ, որպես միասնական գույք, պետական գրանցում ստացած 0,0072 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03102018-06-0045 վկայական՝ տրված 2018 թվականի հոկտեմբերի 3-ին) նվիրատվությամբ փոխանցել Նարինե Ալբերտի Ավագյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Նարինե Ալբերտի Ավագյան - ինքը՝ ծնված 1964 թվականին,
2) Արթուր Ազատի Օհանյան - ամուսինը՝ ծնված 1966 թվականին,
3) Դավիթ Արթուրի Օհանյան - տղան՝ ծնված 1991 թվականին,
4) Ալբերտ Արթուրի Օհանյան - տղան՝ ծնված 1994 թվականին,
5) Աիդա Արթուրի Օհանյան – աղջիկը՝ ծնված 1995 թվականին,
6) Արեն Արթուրի Օհանյան - տղան՝ ծնված 1999 թվականին,
7) Ալիտա Արթուրի Օհանյան – աղջիկը՝ ծնված 2000 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սահմանել, որ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմման, նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարումները կատարվում են նվիրառուների միջոցների հաշվին:

4. Հանձնարարել՝

1) աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Միշա Թամամյանին ապահովել սույն որոշման կատարումը:

2) աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում.

3) աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Ավետիսյանին՝ սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 25
ք.Սպիտակ